ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՀՈՒԹՅՈՒՆ

«Պաշտօն ծայրագոյն վարդապետաց է՝ ունելով կուսումն վարդապետութեան և զգիտութիւն հին և նոր Աստուածային Կտակարանաց, և զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի սուրբ Երրորդութեանն և ի մարդեղութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ առնել զբեմբասացութիւնս և ծագէ ի ծագ անխափան քարոզել»:

(ՄԱՇՏՈՑ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ)

Սույն թվականի հուլիս ամսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, հոգևոր ճեմարանի փոխտեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանին էր ներկայացրել «Վանականության վերաբերյալ Սուրբ Բարսեղ Կեսարացու որոշ հայացքները ըստ «Գիրք Հարցողացի» աշխատությունը՝ ծայրագույն վարդապետական աստիճան ստանալու համար:

Քննիչ հանձնախումբը՝ նախագահությամբ Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, անդամներ՝ հոգևոր ճեմարանի վաստակաշատ դասախոս տիար Պարգև Շահբազյան և «Էջմիածին» ամսագրի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու տիար Երվանդ Մելքոնյան, քննելով և բարձր գնահատելով Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանի ներկայացրած գրավոր աշխատությունը, խնդրել էր Վեհափառ Հայրապետին՝ թույլ տալ դիսերտանտին հուլիսի 23-ին հանդես գալու իր թեզի բանավոր պաշտպանությամբ:

Հուլիսի 23-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11.00-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանի ներկայացրած թեզի բանավոր պաշտպանությունը:

Նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավել Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Գևորգ սրբազան հայրերը:

Հանդիսությանը ներկա էին նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու այլ հրավիրյալներ:

Տերունական աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկավ քննիչ հանձնախմբի նախագահ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Որից հետո քննիչ հանձնախմբի անդամ տիար Երվանդ Մելքոնյանը ունկնդիրներին ներկայացրեց Տ. Հայկազուն վարդապետի աշխատության մասին քննիչ հանձնախմբի կողմից կազմված կարծիքը՝ ի մասնավորի ասելով.

«Տ. Հայկազուն վարդապետի վերոհիշյալ աշխատությունը նվիրված է Բարսեղ Կեսարացու հայացքներին վանականության մասին:

Հայ իրականության մեջ առաջին անգամ է, որ այսպիսի մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկվում Բարսեղ Կեսարացու «Գիրք Հարցողաց» երկը, որտեղ հարց

ու պատասխանի ձևով տրվում են այն սկզբունքային դրույթները, որոնց վրա պետք է հիմնվի վանական կյանքը:

Հեղինակը քայլ առ քայլ բացահայտում է Սուրբ Բարսեղ Կեսարացու տեսակետները վանական կյանքի անհրաժեշտության, միայնակեցության նկատմամբ վանականության առավելությունների մասին:

Աշխատության ներածական-ուսումնասիրական բաժինը, որ մոտ 100 էջ է, ամբողջական պատկերացում է տալիս Սուրբ Բարսեղ Կեսարացու ըմբռնումների մասին: Մեծ առավելություն է, որ հեղինակը այս կամ այն հարցի առիթով համեմատություններ է անցկացնում ոչ միայն Բարսեղ Կեսարացու շրջանի նշանավոր գործիչների ըմբռնումների, այլև երբեմն որոշ երևույթներ համեմատում է այսօրվա վանական կյանքի հետ, մի բան, որ աշխատանքը դարձնում է առավել այժմեական:

Սակայն այս աշխատության մեծագույն արժեքը մոտ 260 մեքենագիր էջ կազմող բնագիրն է, որ հեղինակը կազմել է՝ համեմատելով Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը մի կողմից և հայերեն բնագիրն ու հունարեն բնօրինակը և նրա անգլերեն թարգմանությունը՝ մյուս կողմից: Ոչ միայն նշված են տարբերությունները հայերեն թարգմանության և հունարեն բնօրինակի միջև, այլև ի պահանջել հարկին տողատակում լրացվել է հայերեն թարգմանությունը: Ճշգրտված են հարց ու պատասխանների համապատասխանությունները և, որ պակաս կարևոր չէ, նշված են «Գիրք Հարցողաց»-ում Ս. Բարսեղ Կեսարացու բոլոր աստվածաշնչական վկայությունները: Բնագիրը որոշ վերանայումներից հետո կարելի է պատրաստ համարել հրատարակության, այսպիսի կարևոր մի թարգմանություն գիտական աշխարհի սեփականությունը դարձնելու համար:

Հարուստ է մանավանդ հեղինակի օգտագործած գրականության ցանկը, որտեղ համեմատորեն սպառիչ կերպով ուսումնասիրված է հարցը. սակայն, ի պատիվ հեղինակի պետք է ասել, որ նա չի կորցրել իր ինքնուրույնությունը և մեկ չի ներկայանում իբրև այլոց կարծիքների սոսկական վերարտադրող. նա բազմիցս իր անհատական վերաբերմունքն է հայտնում այս կամ այն հեղինակի ասածների առթիվ»:

Հանձնախումբը մատնանշեց նաև աշխատանքում տեղ գտած որոշ թերություններ:

Այնուհետև հանդես եկավ հոգեշնորհ Հայկազուն վարդապետը՝ ներկաներին ներկայացնելով իր կատարած աշխատանքի մանրամասնությունները:

Հանձնախմբի կողմից տրված հարցերին Տ. Հայկազուն վարդապետի բավարար պատասխաններից հետո, հանձնախմբի նախագահ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը հրապարակեց քննիչ հանձնաժողովի դրական կարծիքը՝ Տ. Հայկազուն վարդապետին ծայրագունության աստիճան շնորհելու մասին:

Խմբովին երգված «Հայր մեր»-ով ավարտվեց թեկի բանավոր պաշտպանության հանդիսությունը:

Հավարտ հանդիսության քննիչ հանձնաժողովի անդամները և Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը առաջնորդվեցին Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը շնորհավորեց Տ. Հայկազուն վարդապետին և իր գոհունակությունը հայտնեց կատարված աշխատանքի համար:

Հուլիսի 29-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11.00-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, հանդիսավորությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոլապալյանի, սկսվեց Տ. Հայկազուն վարդապետի ծայրագունության աստիճանի տվչության հանդիսավոր արարողությունը՝ ըստ Հայաստանյայց Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի:

Հանդիսավոր արարողության խարտավիլակի պաշտոնը ստանձնել էր Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Արարողությանը մասնակցում էին նաև Մայր Աթոռի հոգեշնորհ հայրերն ու սարկավագները:

Հավարտ հանդիսավոր արարողության հանդիսադիր Տ. Ներսես եպս. Պոլապալյանը, ի շնորհավորումն հոգեշնորհ Հայկազուն ծայրագույն վարդապետի, խոսեց հետևյալ իմաստալից խրատականը:

Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Հանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Կարկառեա ի վերայ իմ զամենամերձ աջ քո և զօրացո զիս շնորհօք զթութեանդ քո: Փարատեա ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց...» (Նարեկ ԼԴ):

Սիրելի միաբանակից եղբայրներ և հավատացյալներ:

Մայր Աթոռի միաբաններս ժողովրդով հանդերձ, վերստին բորբվել ենք այս սրբազան վայրում՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցու կամարների տակ՝ միաբանությանս համար ավանդություն դարձած վարդապետական աստիճանների տվչության

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ. ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌՋԵՎ

հոգեկան արարողության մասնակցելու. այստեղ, եռամեծ վարդապետի աճյունների մոտ և նրա հավերժական շնչի տակ:

Պահը որքան հուզիչ է և սփոփարար. քիչ առաջ ապգիս Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռիս միաբան հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետին Ս. Հոգու ներգործությամբ և բոլորիս աղոթքով շնորհեցինք ծայրագույն վարդապետության տասը աստիճանները, որպես գնահատանք նրա վաստակի և ի գնահատումն նրա ներկայացրած աշխատասիրության՝ վանականության ծագման վերաբերյալ:

Մեր սիրտը այս պահին ուրախությամբ է լցված, մանավանդ ի տես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր կյանքին, նրա ստեղծած արժեքներին և անսայթաք առաքելական ընթացքին: Հայաստանյայց Եկեղեցին, նման իր ժողովրդին, կյանքում հաղթահարել է բազմաթիվ խոչընդոտներ և դժվարություններ ու հասել ներկայիս երջանիկ հանգրվանին: Նա, ավելի քան երբեք, կյանքի փորձով կոփված՝ ապագան դիմավորում է լավատեսությամբ լեցուն՝ ի տես մեր խաղաղ ու շինարար ամենօրյա երջանիկ կյանքի հայրենի հողի վրա:

Մյուս կողմից, սակայն, քրիստոնեական համաշխարհային Եկեղեցին արդի աշխարհիկ իրապույրներով հագեցած կյանքում գտնվում է դժվարության առջև՝ արժանավոր հոգևոր սպասավորներ գտնելու հարցում: Հակառակ գոյություն ունեցող այս դժվարության, Հայաստանյայց Եկեղեցու ծոցում թերևս գտնվում են կոչման գիտակցությունը ըզգացող հայորդիներ, որոնք լըցված հավատքով և նախանձախնդրությամբ՝ իրենց գիտակցական ողջ կյանքը նվիրում են Եկեղեցուն, ուր, ինչպես ասում է Ավետարանը, «Հունձք բազում են, և մշակք սակաւ» (Մատթ. Թ 37):

Ես հայր Հայկազունին ծանոթ եմ նրա ուսանողական տարիներից հոգևոր ճեմարանում. այդ տարիներին վարում էի ճեմարանի տեսչի պաշտոնը: Ուսանողական տարիներին նրա մեջ նկատել էի ատաղձը հոգևոր սպասավոր դառնալու: Ճեմարանում նա իր ուսումը ամբողջացնելուց հետո Վեհափառ Հայրապետի համաձայնությամբ ուսանելու մեկնեց Լոնդոն: Նույն տարիներին ես իմ հերթին վարում էի առաջնորդական պաշտոն Անգլիայում: Այստեղ նա գտնվում էր իմ անմիջական հոգևոր հսկողության ներքև: Հայր Հայկազունը 1975 թ. փետրվարին իր հոժար կամքով հանձն առավ ձեռնադրվել կուսակրոն քահանա իբրև միաբանության անդամ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Սա առաջին քահանայական ձեռնադրությունն էր, որ կատարվում էր Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում: Հայկազուն անունն էի որոշել տալ նրան, ի հիշատակ երջանկահիշատակ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի, որ մի քանի տարի առաջ Մայր Աթոռում վախճանվել էր, և հանգուցյալ սրբազանը ճեմարանում եղել էր և՛ հայր, և՛ ձեռնադրյալի ուսուցիչը: Հետագայում Տ. Հայկազուն աբեղան իրեն հատուկ ջանասիրությամբ սովորելով՝ ավարտեց իր ուսման ընթացքը Քինգզ քոլեջի աստվածաբանական ֆակուլտետում: Նա միաժամանակ իր ազատ օրերին գալիս էր կանոնավորապես ծառայելու մեր թեմի եկեղեցիներում և այդպիսով մխիթարելու հայ հավատացյալ հոտը:

Այժմ նրա ձեռնադրության օրվանից անցել են ավելի քան տասնմեկ տարիներ: Հայր Հայկազունը վերադարձել է Մայր Աթոռ և այստեղ հինգ երկար տարիներ ծառայել հոգևոր ճեմարանում իբրև փոխտեսուչ, միշտ հավատով, նախանձախնդրությամբ և անմնացորդ կերպով տվել ճեմարանի սաներին այն, ինչ որ ինքն ստացել էր ուսման տարիներին: Շուրջ երկու տարի առաջ այս նույն սրբազան կամարների տակ նա մեր ձեռքից ստացավ մասնավոր վարդապետական չորս աստիճաններ և այժմ որքան խրախուսիչ է, որ նա այսօր, կրկին մեր ձեռամբ, ստացավ Հայ Եկեղեցու ուսումնական բարձրագույն աստիճանը:

Շատ շուտով, մի քանի օր վերջ, հայր Հայկազունը Մայր Աթոռից մեկնելու է դեպի հեռավոր Հյուսիսային Ամերիկա՝ այնտեղ հովվական նոր պաշտոնի կոչվելու համար: Երբ անցյալ կիրակի օրը նա իր ուխտի պատարագն էր մատուցում մեկնելուց առաջ, այդ առթիվ մենք՝ նրա բոլոր միաբանակից եղբայրներս, մտովի ընկերակցում էինք նրա աղոթքներին և նրա համար հայցում լավագույնը ծառայության նոր ասպարեզում և ցանկանում, որ նա լինի «մշակ առանց ամօթոյ»:

Սիրելի հայր Հայկազուն, իբրև ավագ եղբայր ուզում եմ տալ Ձեզ հետևյալ խորհուրդը. կյանքում և մանավանդ աշխատանքի բոլոր բնագավառներում դժվարություններ շատ կան, դա անժխտելի է, պարզապես համբերությամբ և խոհեմությամբ փնտրեցեք և գտեք միջոցներ խոչընդոտները հաղթահարելու համար: Հոգևոր կյանքում հաջողություն գտնելու գաղտնիքներից մեկն էլ նվիրվածությունն ու հարատևությունն է: Պետք չէ մոռանալ, որ ամեն մեկ խոչընդոտ կամ դժվարություն կյանքում մի նոր դաս է գիտակից մարդու համար: Մենք համոզված ենք, որ Դուք Ձեր կրթությամբ, փորձառու-

Академия наук Армянской ССР

թյամբ և հասունությամբ արդեն իսկ պատրաստ եք Ձեզ վստահված ծառայության սրբական գործը հաջողությամբ ի կատար ածելու:

Նվիրական այս պահին ինձ վրա դրված է մի քաղցր պարտականություն՝ շնորհավորելու Ձեզ, Ձեր ծայրագույն վարդապետական բարձր աստիճանի առացման առթիվ, ապգիս Վեհափառ Հայրապետ, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի անունից: Մենք՝ Ձեր միաբանակից եղբայրներս և հարազատները, սրտանց մաղթում ենք Ձեզ հաջողություն: Զմոռանաք Մայր Աթոռը, հոգևոր ճեմարանի Ձեր ուսանողական տարիները, ճեմարանի Ձեր սանները, մեր Եկեղեցու նվիրական սրբություններն ու մեր սրբազան երկիրը Հայաստան:

Այս առթիվ հաճելի է ինձ համար այս հուսկիչ պահին Ձեզ հանձնելու ծայրագույն վարդապետական ականակուռ այս խաչը՝ իբրև խտացյալ գիտակցություն Ձեր հոգևոր պարտականությանց, և վարդապետական քարոզչի այս գավազանը՝ առաջնորդելու Ձեզ հանձնված հոտը, Ձեր ուսերին գցելու մանուշակագույն այս փիլոնը՝ իբրև խշտյակը Եղիայի, Ձեզ կորացնելու և հավատքով ջերմացնելու համար, որպեսզի այս բոլորով կորացած լծվեք վսեմ գործին՝ աշխարհի խաղաղության և բարօրության և Հայաստանյաց Եկեղեցվո որդիների մխիթարության:

«Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս մկրտեցէք զնոսա, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 19). ամեն»:

Հոգեշնորհ Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանին շնորհավորեցին միաբանակից եղբայրները, ինչպես նաև արարողությանը ներկա գտնվող բազմաթիվ հավատացյալներ:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանին և բարեմաղթում հաջողություններ՝ իր ապագա հոգևոր ծառայության ասպարեզում: